Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

2010 թվական N ----------Ն

ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 981-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գարգառի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, 0.52 հեկտար հողերը, այդ թվում 0.4 հեկտար քաղաքացու սեփականություն հանդիսացող վարելահող, 0.12 հեկտար համայնքային սեփականություն հանդիսացող այլ հողատեսք փոխադրել բնակավարի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման՝ գազալցակայանի կառուցման համար։

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գարգառի գյուղական համայնքի ղեկավարին՝

1) ապահովել քաղաքացու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը.

2) սույն կետի 1-ին ենթակետով գանձված ֆինանսական միջոցներն ուղղել համայնքի հողերի գոտևորման և օգտագործման սխեմայի կամ գլխավոր հատակագծի կազմմանը։

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին՝

1) իրականացնել հսկողություն սույն որոշման 2-րդ կետի կատարման նկատմամբ.

2) սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերը 3 տարվա ընթացքում չկառուցապատելու դեպքում սահմանված կարգով ներկայացնել սույն որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«Հողերի կատեգորիան փոխելու մասին » ՀՀ կառավարության որոշման նախագծի

ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան հողերի նպատակային նշանակության փոփոխությունը կատարում է ՀՀ կառավարությունը՝ հողաշինարարական ու քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա։

ՀՀ Լոռու մարզի Գարգառի գյուղական համայնքի ղեկավարը հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով ներկայացրել է 0.52 հեկտար հողերը, այդ թվում 0.4 հեկտար քաղաքացու սեփականություն հանդիսացող վարելահող, 0.12 հեկտար համայնքային սեփականություն հանդիսացող այլ հողատեսք փոխադրելու բնակավայրի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման՝ գազալցակայանի կառուցման համար։

Ներկայացված որոշման նախագծով նախատեսվում է 0.52 հեկտար հողերը, այդ թվում 0.4 հեկտար քաղաքացու սեփականություն հանդիսացող վարելահող, 0.12 հեկտար համայնքային սեփականություն հանդիսացող այլ հողատեսք փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման՝ գազալցակայանի կառուցման համար։

Նշված համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով հողերի կատեգորիան փոխելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծով նախատեսված սխեման ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել հողային օրենսգրքի /մասնավորապես 6-րդ, 7-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 57-րդ և 64-րդ հոդվածների/ պահանջներին համապատասխան և ՀՀ կառավարության 2001 թ. հունվարի 17-ի «Հողերի օգտագործման սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» N 30 որոշման 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված կարգով։

Միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացության հիման վրա հողերի կատեգորիան փոխելու մասին ժամանակավոր սխեման համաձայնեցվել և հաստատվել է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության, էներգետիկայի և

բնական պաշարների, էկոնոմիկայի, մշակույթի նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից։

Հողերի կատեգորիան փոխելու մասին համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայի վերաբերյալ առկա են համայնքի ավագանու որոշումը՝ (սխեմային հավանություն տալու մասին), մարզպետի համաձայնությունը (մարզային հանձնաժողովի եզրակացության հիման վրա) ։

Հողերի օգտագործման ժամանակավոր
սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական
հանձնաժողովի նախագահ **Վ. Տերտերյան**